

Փրկենք մեղուներին անհետացումից



1. Մակաբույծներ և հիվանդություններ

- Հատկապես վտանգավոր է վարոաստիզը (*Varroa destructor*)՝ մեղուներին թուլացնող և վիրուսներ տարածող տիզը:
- Հաճախակի են մանրէային և սնկային վարակները, որոնք արագորեն ազդում են ամբողջ ընտանիքների վրա:



2. Թունաքիմիկատների գերօգտագործում

- Գյուղատնտեսությունում օգտագործվում են քիմիական նյութեր (ներառյալ նեոնիկոտինոիդները), որոնք ազդում են մեղուների նյարդային համակարգի վրա՝ խաթարելով դրանց կողմնորոշումը և հիշողությունը:
- Բույսերի ծաղկման շրջանում ցողումը հատկապես կործանարար է: Մեղուները կործանվում են անմիջապես դաշտում կամ թույնն իրենց հետ տանում են փեթակ:


3. Կերային բազայի կրճատում

- Մոնոշակաբույսերի ընդլայնումը և վայրի մեղրատու բույսերի կրճատումը մեղուներին զրկում են բազմազան սննդից:
- Մարգագետինների, արոտավայրերի և անտառային գոտիների կրճատումը նվազեցնում է ծաղկափոշու և նեկտարի քանակը:



4. Կլիմայական փոփոխություններ

- Անկայուն ձմեռները, վաղ գարունները, երաշտները և ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունները խաթարում են ծաղկման ցիկլերը և մեղուների գործունեությունը:
- Արդյունքում, մեղուները ձմեռային քնից դուրս են գալիս այն ժամանակահատվածներում, երբ դեռևս բավարար քանակությամբ ծաղկող բույսեր չկան:



5. Մեղվաբուծության սխալ մեթոդներ

- Հիվանդությունների կանոնավոր կանխարգելման բացակայություն, ոչ ճիշտ կերակրում և մեղվափեթակներում հակասանիտարական պայմաններ
- Մեղուների ներմուծում այլ շրջաններից՝ առանց կարանտինային միջոցառումների անցկացման, ինչը հանգեցնում է նոր հիվանդությունների տարածմանը:



6. Բնակատեղիների կորուստ

- Քաղաքաշինությունը, շինարարությունը և ինտենսիվ հողօգտագործումը նվազեցնում են մեղուների բնակության և սնվելու համար պիտանի մեղրատու բույսերով հարուստ տարածքները:



7. Շրջակա միջավայրի աղտոտում

- Ծանր մետաղները, արտանետվող գազերը, փոշին և այլ աղտոտող նյութերը վսասում են մեղուների առողջությունը:



Ինչպե՞ս փրկել մեղուներին ոչնչացումից

Անհրաժեշտ են գործողություններ երեք մակարդակում՝ պետական, հանրային և անձնական:

Ազգային և միջազգային միջոցառումներ



1. Վտանգավոր թունաքիմիկատների օգտագործման սահմանափակում

- Արգելել կամ խստորեն վերահսկել նեոնիկոտինոիդների և այլ թունավոր միջատասպանների օգտագործումը
- Ներդնել ծաղկման շրջանից դուրս ցողման կանոններ

2. Մեղվաբույծների աջակցություն

- Սուբսիդիաներ՝ մեղվաբնտանիքների, փեթակների և սարքավորումների գնման համար
- Անվճար կամ զեղչված անասնաբուժական ծառայություններ (վարոատոզի բուժում, հիվանդությունների ախտորոշում)



3. Մեղրատու բույսերով հողատարածքների պահպանում և վերականգնում

- Դաշտերի երկայնքով «փոշոտողների համար գոտիների» ստեղծում, ծառերի և թփերի տնկում՝ մեղրատու բույսերի հետ միասին
- Վայրի մեղրատու բույսերի հատման արգելք կրիտիկական ժամանակահատվածներում

4. Գիտական հետազոտություններ և սելեկցիա

- Հիվանդությունների նկատմամբ դիմացկուն մեղուների ցեղատեսակների բուծում
- Մակարայծների դեմ պայքարի այլընտրանքային, էկոլոգիական մեթոդների մշակում

Հասարակական մակարդակում ձեռնարկվող միջոցառումներ

1. Քաղաքային մեղվաբուծություն և «կանաչ» գոտիներ

- Փեթակների տեղադրում տանիքներին և այգիներում
- Նեկտարով հարուստ բույսերի տնկում (լավանդա, լոբենի, խրձաճաղիկ, դաղձ)

2. Կրթական ծրագրեր

- Ֆերմերների համար քիմիական նյութերի անվտանգ օգտագործման վերաբերյալ դասընթացներ
- Բնակչության իրազեկում մեղուների կարևորության մասին

3. Աջակցություն տեղացի մեղվաբույծներին

- Տեղացի մեղվաբույծներից մթերք գնելը խթանում է ոլորտի զարգացումը:



Ի՞նչ կարող է անել մեզանից յուրաքանչյուրը

- Տնկել մեղրատու բույսեր հողամասում կամ պատշգամբում
- Չօգտագործել քիմիական միջատասպան նյութեր կամ ընտրել կենսաբանական պատրաստուկներ
- Աջակցել տեղացի մեղվաբույծներին՝ գնելով նրանց արտադրանքը
- Թողնել «վայրի գոտիներ» այգում՝ անկյուններ մարգագետնային ծաղիկներով և խոտաբույսերով

«Փրկենք մեղուներին» մեկամյա քայլ առ քայլ ծրագիրն՝ ըստ եղանակների՝ կոնկրետ գործողություններով վաղ գարնանից մինչև ձմեռ, նախատեսված է այգեգործների, ֆերմերների, տեղական իշխանությունների և սովորական բնակիչների համար՝ նախատեսված միջոցառումները համատեղելու համար:

Վաղ գարուն (մարտ-ապրիլ)

Նպատակը՝ օգնել մեղուներին գոյատևել ձմեռային քնից դուրս գալուց հետո և ապահովել վաղ կեր

1. Վաղ ծաղկող մեղրատու բույսերի տնկում

- Քրքում, ձնծաղիկներ, գայլասխտոր, ուռենիներ, նշտատերև ուռենիներ, տատրակ
- Տնկել դպրոցների մոտ, պուրակներում և այգիներում

2. «Մեղուների անկյունների» ստեղծում առանց քիմիական նյութերի

- Ընտրել այն տարածքները, որտեղ թունաքիմիկատներով բուծում չի իրականացվում
- Տեղադրել ցուցանակներ՝ «Մեղուների պաշտպանության գոտի» անվանմամբ

3. Մեղվափեթակների ստուգում և վերանորոգում (մեղվաբույծների համար)

- Ջերմամեկուսացում, օդափոխություն, շրջանակների ախտահանում

4. Տեղեկատվական արշավ

- Մեղուների կարևորության մասին պաստառներ, սոցիալական ցանցեր, արտադասարանային պարապմունքներ



Ուշ գարուն (մայիս-հունիս)

Նպատակը՝ ապահովել զանգվածային ծաղկում առանց քիմիական նյութերի պատճառած վնասի

1. Մեղրատու բույսերի և ծաղիկների տնկում

- Առվույտ, խրձածաղիկ, երեքնուկ, կորնգան
- Պայմանավորվել ֆերմերների հետ՝ «մեղուների համար գոտիներ» հատկացնելու մասին

2. Ցողման կարգավորում

- Բույսերի մշակում միայն վաղ առավոտյան կամ երեկոյան՝ մեղուների թռիչքի ժամանակից դուրս
- Ավելի պակաս թունավոր միջոցների օգտագործում

3. Վայրի մեղուների համար «մեղուների հյուրանոցների» տեղադրում

- Փայտե բլոկներ՝ անցքերով, խոռոչավոր ցողուններով

4. «Մեղվի օր» տոնի կազմակերպում (մայիսի 20)

- Վարպետության դասեր, տնկում, մեղուների պաշտպանության համար միջոցների հավաքագրում



Ամառ (հուլիս-օգոստոս)

Նպատակը՝ աջակցել մեղուներին աշխատանքի գագաթնակետին և պաշտպանել դրանց գերտաքացումից և հիվանդություններից

1. Ջրի աղբյուր մեղուների համար

- Փոքր տարաներ՝ խճաքարերով կամ լողացող փայտիկներով

2. Մեղրատու բույսերի ծաղկման գագաթնակետին խոտհնձի արգելք

- Տեղական իշխանությունները պետք է տեղափոխեն ճանապարհաեզրերի և մարգագետինների խոտհնձի ժամկետները:

3. Հիվանդությունների մշտադիտարկում (վարձատոզ, նոզեմատոզ)

- Մեղվաբույժների համար՝ պլանային ստուգումներ և բուժման կենսաբանական մեթոդների կիրառում

4. Վայրի բույսերի դաշտային «կղզիներ»

- Մի՛ խոտհնձեք դաշտերն ու մարգագետիններն ամբողջությամբ, թողեք թափկներով գոտիներ:



Աշուն (սեպտեմբեր-հոկտեմբեր)

Նպատակը՝ կուտակել սնունդ, պատրաստել փեթակներ և բնակատեղիներ՝ ձմեռելու համար

1. Ուշ ծաղկող բույսեր

- Արևածաղիկ, աստղածաղիկ, ոսկեշիվ, թանթոնիկ

2. Մեղրի պաշարների հավաքագրում և պահպանում

- Թողնել բավարար քանակությամբ սնունդ փեթակներում (ամբողջը դուրս չհանել):

3. Մեղվափեթակների մաքրում և վերանորոգում

- Ճեղքերի փակում, կրծողներից պաշտպանություն

4. Մեղրատու բույսերի սերմերի նախապատրաստում հաջորդ տարվա համար

- Հավաք և փոխանակում մեղվաբույծների և այգեգործների միջև



Չմեռ (նոյեմբեր-փետրվար)

Նպատակը՝ նվազագույնի հասցնել սթրեսը և կորուստը

1. Մեղուների համար հանգիստ շրջան

- Հանգիստ թողե՛ք փեթակները, պաշտպանե՛ք դրանք քամուց և աղմուկից:

2. Չմեռողների ստուգում (մեղվաբույծների կողմից)

- Ջերմաստիճանի և խոնավության վերահսկում

3. Գարնանային տնկարկների պլանավորում


- Մերմերի պատվիրում, համաձայնություններ հարևանների և տեղական իշխանությունների հետ

4. Կրթական հանդիպումներ և դասընթացներ

- Մեղվաբույծների և ֆերմերների վերապատրաստում էկոլոգիական մեթոդների վերաբերյալ



Տարվա կարգախոսը՝ «Ավելի շատ ծաղիկներ, ավելի քիչ թույն, մաքուր ջուր, և մեղուները կապրեն»:



Սույն տեղեկատվական նյութը պատրաստվել է «Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամի կողմից՝ «Կանաչ դրամաշնորհների» գլոբալ հիմնադրամի (GGF) ֆինանսավորմամբ իրականացվող «Փրկելով մեղուներին՝ փրկում ենք մեզ» ծրագրի շրջանակում:

«Գյուղի կայուն զարգացում» գյուղատնտեսական հիմնադրամ

ՀՀ, Երևան, Շինարարների փող. 18, բն. 52

Էլ. փոստ՝ info@ruraldaf.am

Վեբ կայք՝ <http://www.ruraldaf.am>